



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

4 մայիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Կ. Բալայանի

Ուսումնասիրելով քաղաքացի Օվսանա Գալստյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Օվսանա Գալստյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի ապրիլի 17-ին)՝ խնդրելով.

«1. ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6 և 91, 93, 18-րդ հոդվածներին, 101-րդ հոդվածի 7-րդ ենթակետին հակասող և անվավեր ճանաչել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը,

2. ՀՀ Սահմանադրության 1-ին, 3 և 83.5, 5, 6 և 91, 93, 18-րդ հոդվածներին, 101-րդ հոդվածի 7-րդ ենթակետին հակասող և անվավեր ճանաչել «Սահմանադրական

դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը, այնքանով, որքանով չի նախատեսում Սահմանադրական դատարան դիմելու մասին դատավարության կողմի (կիրառման ենթակա դրույթի ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ ողջամիտ կասկած պարունակող) միջնորդության առկայության պայմաններում դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը կամ այդպիսի միջնորդության առկայության պայմաններում դրան պատշաճ պատասխան տալու պարտականությունը,

3. ՀՀ Սահմանադրության 1-ին, 18, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը,

Կամ

4. Բացահայտել ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը»:

1. Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության իրավունքից բխում է դատարանների՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը՝ կիրառման ենթակա իրավական ակտի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ կասկածի դեպքում, հատկապես, եթե առկա է օրենքի դրույթի վերաբերյալ դատավարության կողմի արտահայտած՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ կասկած:

Դիմողը գտնում է, որ դատական մարմինների սահմանադրական խնդիրն է մարդու իրավունքների և պաշտպանողի դիրքերում հանդես գալը, իսկ կիրառման ենթակա դրույթների կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը նպատակաուղղված է կանխել դատարանի կողմից կոնկրետ վեճի լուծումը ենթադրյալ հակասահմանադրական օրենքի հիման վրա:

Դիմողի կարծիքով՝ դատարանների կողմից իրավակիրառական պրակտիկայում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասին հարողովել է այնպիսի իմաստ, ըստ որի՝ այն դատարաններին իրավունք է վերապահում գործը կասեցնելու և սահմանադրական դատարան դիմելու մասին հարուցված միջնոր-

դությունը քննարկելիս դրսևորել լայն հայեցողություն կամ լռելյայն մերժել միջնորդությունը՝ չպատճառաբանելով այն:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի ենթադրյալ հակասահմանադրականությանը՝ դիմողը նշում է, որ վարչական դատարանը խնդրո առարկա նորմին հաղորդել է այնպիսի իմաստ, ըստ որի՝ հանրային իրավահարաբերություններից ծագած վեճը ենթակա չէ վարչական դատարանի քննությանը, եթե հայցի պահանջի շարադրանքը կամ ձևակերպումը չի տեղավորվում հայցատեսակների կադապարներում:

Դիմողն իր դիմումում ներկայացրել է նաև այլ փաստարկներ:

Դիմողը միաժամանակ ներկայացրել է միջնորդություն պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ.

2.1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի առնչությամբ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ խնդրո առարկա իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Բացի դրանից, դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Հետևաբար, վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

2.2. Դիմողի կողմից վիճարկվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Քաղաքացի Օվսանա Գալստյանի անհատական դիմումով գործը՝ «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի մասով ընդունել քննության:

2. Քաղաքացի Օվսանա Գալստյանին ազատել պետական տուրքի վճարումից:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

4 մայիսի 2015 թվականի
ՄԴԴԿՈ/2-15